

14. Կեանք, քրդական գյուղ էր, ընակիչների ղրաղումները՝ խաշնարածությունն էր ու երկրագործությունը:

15. Ազկաւա, սա ևս, ինչպես հարեան Քրդգլան գյուղը, հիմնվել էր երրեմնի Արճակին պատկանող ամենահեռավոր հողամասերում: Հիմնել էին Ղրիմից եկած շերքեղները և որպես շերքեղական գյուղ, գտնվում միակն էր: Չերքեղներից բացի, այստեղ ապրում էին նաև մի քանի քուրդ ընտանիք:

16. Մանդան, մինչև 1900-ական թվականները զուտ հայկական գյուղ էր եղել: 1896 թվականին՝ 35 տուն ունեցող հայկական գյուղը 15 տարի անց 33 քրդական ընտանիք ուներ: Մանգանում մնացած փոքրաթիվ հայերը նորածիններին մկրտում էին Արճակի կամ Խառակոնիսի եկեղեցիներում: Մենգյան ու Հարություն առնների նախօրյակին, երկու մանգանցի գալիս ու իրենց գյուղն էին առաջնորդում Արճակի ավագ քահանային՝ հոգևոր դործերը հոգալու:

17. Հաշվաշա, գյուղի կալվածատերը Աղարեկ Լֆեհեդի անունով մի վանեցի թուրք էր: Նա հնուց բարեկամական կապի մեջ էր Արճակի մի քանի տոհմական ընտանիքների հետ: Ամեն աշնան, երբ Արճակի ու Խառակոնիսի ուխտավորները գնում էին Տիրամեր, առաջին օրը գիշերում էին Հաշվաշաի հայերի մոտ:

18. Հագաւա, հին հայարնակ գյուղ էր, քրդախառն էր գործել վերջին հարյուրամյակում: 1915 թ. փետրվարին հաղարացի հայերը, տեղյակ լինելով ոռոգական ռանակի ու կամավորական զինների նահանջին, նույն գիշերը վերցնելով իրենց անասունները, գյուղից փախան: Քսանից ավելի ընտանիք եկավ Արճակ (ուր մնացին մինչև ապրիլ), մնացյալները՝ Վանին ավելի մոտիկ գյուղերում: Արճակ եկած հաղարացիները մինչև վերջին ուշա՛հը մնացին այնտեղ ու ղոհվեցին:

19. Հասվաաս, սա Արճակից ամենահեռու ընկած գյուղն էր: Այստեղի հայերը 1915 թ. հայ կամավորական ջոկատների հետ կարողացան հեռանալ Կովկաս և փրկվել կոտորածներից:

20. Զաւաւ, 35 տուն ունեցող հայկական գյուղ էր, ուր նաև երկու տուն քուրդ էին վերաբնակվել:

21. Բագագլասա¹, հայկական գյուղ՝ քսան տուն:

22. Տաղվաւա, 32 տուն հայ, երկու տուն քուրդ:

Արճակի գավառի մեջ էին մասնում նաև՝ Լիմ, Աւան, Զոպանօղլու, Կարթալան, Շամջադին, Աղջաշայ, Զախմախ, Սաթիրեկ քրդախառն գյուղերը:

Ա Ր Ժ Ա Կ Գ Յ Ո Ւ Ղ Ը

Արճակ գյուղը գտնվում է համանուն լճի արևելյան ափի հարթավայրում: Գյուղի արևմտյան կողմից մինչև լիճը ծաղկուն ու ռաղմաղբյուր մարգագետին էր: Մարգագետնի մի մասը՝ լճափին մոտիկ, տեղ-տեղ ճահճոտ էր, որից հետո եղեգնուտն էր՝ մինչև լիճը: Գյուղի ու մարգագետնի արանքում կար ե ավաղուտ:

Դեպի արևելք ու հյուսիս-արևելք տասնյակ կիլոմետրեր ատրածված էին գյուղի հարթ ու բերրի վարելահողերն ու արոտավայրերը:

Գյուղի հարավակողմի մարգագետնային հարթությունում էր գտնվում հայկական Խառակոնիս² գյուղը: Երկու գյուղերի սահմանն էր Խառակոնիս

գետը, որ թափվում էր Արճակի լիճը: Տեղացիներն այդ գետն անվանում էին Ճաշ կետ, ի տարբերություն Արճակի գետի, որը շատ սակավաջուր էր և կոչվում էր Պլասաիկ կետ:

Գյուղի հյուսիսակողմից, լճում եղած փոքրիկ հրվանդանից սկսելով և հեղահեռա՛ծ գլխով գետի արևելք, Արճակ գյուղի հովաթի մի մասը օղակում էին մի շարք գեղանիստ ըլուրներ, որոնք գագաթ առ գագաթ բարձրանալով գետի վեր, միաձուլվում էին Աղտաշա, Գնձան, Առճակու կամ էրկրթներ կոչվող լեռներին:

¹ Այս և հաջորդ գյուղերի մասին տեղեկությունները վերցված են Ա-ԴՕ-ի 1921 թ. Երևանում լույս տեսած «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» գրքից:

² Վանի նահանգում լայնորեն տարածված էր «Առճակ-Խառակոնիս» ակն աշխրիս» ասացվածքը: Այս գյուղերը լճափնյա նույն հարթության վրա էին տարածված, միմյանցից մի քանի կիլոմետր հեռու: Արճակին ամենամոտիկ

հարեան, բարձրների հարուստ ծառատաններով օղակված Խառակոնիսը Արճակի գավառի ամենամեծ հայարնակ գյուղն էր: Տարազների նիստուկացի, ընտանեկան սովորությունների, նույնիսկ բարբառների տարբերություն համարյա գոյություն չունեին, եթե հաշվի չառնվի ահու՛ր բառի փոխարեն ահու՛ր ասելը, թանով սպասին արճակցից պա՛ս, խառակոնիսցից ապա՛ս ասելը:

Բնավորության գծերում աչքասու տարբերություն կար:

Արևմուտքում, լճի հակադիր ափին էր կանգնած Կըզըլջա լճորը, իր ստորոտում ունենալով Կըզըլջա հայկական ծառադարձ գյուղը: Հարավ ու հարավ-տրեւելք, կողք-կողքի դժադրվում էին Ռահմին և Աղթաղաղ լեռների դազաթնները: Հիշյալ վեց լեռներն Արճակի լայնանիստ հովտի շուրջը բոլորած, նրան հմայիչ տեսք էին տալիս:

Մտառաշատ Արճակ գյուղին հմայք էր տալիս նաեւ արեւելյան ընկած Առնակու Աս-սալաւաձին կոչվող ավերակ վանքն իր հսկայածածկով ծառասանով և հյուսիսակողմի ընկած զուլաւանջում դանդաղ սրբացված արհեստական ջրավաղանով: Ամրոցը գավտոտում ծառադարձ էին Արճակ, Խառակոնիս և Կըզըլջա գյուղերը:

Տեղի բնակչության մեջ սերնդեսերունդ պահպանվել էր ավանդություն, որ ներկա Արճակը հինգերորդ Արճակն է. որ կառուցված է համանուն լճի ափին: Մտառաշատ կային վայրեր, որոնք իրենց խորհուրդներով կամ անուններով դալիս էին հիմնավորելու ավանդությունը: Բերենք միայն երեք վայրի նկարագիր:

Ընտելանից լավ ծայնով օժտված խառակոնիսցին միաժամանակ քնարական հոգու տեր էր: Լինելով վերին աստիճանի երգասեր, նա իր աստվածատուր շնորհքը ցուցաբերում էր ամենուր: Ավելի շատ տեղ հատկացնելով ժողովրդական սիրային երգերին, երգելիս ասես ձուլվում էր մեղեդուն: Արճակցին ավելի հարգանք էր տաժում նորադույն ազատագրական երգերի հանդեպ:

Խառակոնիսցին, որքան էլ տեսնական նեղ պայմաններում գտնվեր, իր շեմքը ոտք դնող հյուրին ընդունում էր գրկարաց, ցուցաբերելով շափից ավելի սրտարացություն, մտահոգված, որ հյուրը չնկատի իր անտեսական անախանձելի վիճակը: Այդպիսին չէր քանուկ ճամփարածանում ընկած, ժամանակ ու անժամանակ փափագելի, թե անցանկալի գնացող-նկողից աչք չըացող արճակցին: Վերջինս, որքան էլ որ կարոտալ ու սպասված հյուր ունենար, մի քանի խոսքով էր հայտնում իր ուրախությունը: Լի սեղանին նստեցնելով հյուրին, արճակցին ամենին չէր մտահոգվում սրբելու անտեսության մեջ եղած պակասները:

Ինչպե՞ս խնամիական ու գրան հետևող ազգակցական կասկերը չէին ջնջում արճակցու հոգուց գյուղի ու քաղաքի տարբերության հասկացողությունը, այնպես էլ, և գեռ կրկնապատիկ, այդ երկու գյուղերի ոչ միայն մոտիկ հարեան, այլև մեծ մասամբ հարադատ ազգականներ հանգիսացող գյուղացուց հոգիներում՝ արճակցի, խառակոնիսցի հասկացողությունները: Քեռի աւ քրոջ դավակ, աներ ու փեսա, մորաքույր ու քրոջ ազգիկ, բոլորը ազդեանում էին արճակցի ու խառակոնիսցի անունների մեջ: Խառակոնիսցին արճակցուն պիտակավորում էր՝ «բեմարիֆաթ», «բոնու խոկի», «քյար սիրտ» և այլ ածականներով: Արճակցին էլ իր հերթին խառակոնիսցուն կպցնում էր «պոպիկ պոզ», «աղթատ-խաղատ» և այլ պիտակներ: Նվ այս ամենը քաղցր աւ սիրով էին դրուցում առանց վիրավորելու մտադրությամբ:

Գյուղի հարավ-արեւելքում ընկած էր մի բարձրաթև բլրալանջ, ուր տարածված էին Արճակին պատկանող անջրգի վարելահողերը՝ Ավեթիսի ախալեները: Ավեթիսի ախալեներից շրջապատը լավ երևում էր, մանավանդ լիճը: Այգտեղ կար ընդամենը մի հորդառատ աղբյուր, բայց առկա էին բազմաթիվ խորհուրդներով խորհուրդներ, որտեղից սկիզբ էր առնում էրկրթներ լեռը, ուր մինչև 1915 թ. գեռ կանգուն էին երբեմնի Արճակին պատկանող ձմեռանոց փարախները: Էրկրթներ լեռը արճակցիք անվանում էին «մեր սար», իսկ քրդերը՝ «սար» Արճակն (Արճակի սար): Ավեթիսի ախալեները համարվում էին երբեմնի գոյություն ունեցած Արճակի աղբյուր:

Գյուղի արևմուտքում առաջված լճափնյա մարդագետիները որոշ առաժույթուն կոչվում էր Սլեք Առնակ: Ավեր Առնակ մարդագետի դիմաց, լճի մեջ էր ժողովուրդը տեղադրել այն երեակայական «անխորտակ ժամը», որը «ծովն» իր տակն էր առնել:

Գյուղից հեռու ընկած արեւելակողմում (ուր Արճակը սահմանադատվում էր Քրդական քրդական գյուղից) կար մի մեծ բլուր, Բլուրը կոչվում էր Սըփ Սաղկյիս (Սուրբ Սարգիս): Բլրի մի երեսն անջրդի վարելահողերով պատկանում էր Արճակին. մյուս երեսը՝ Քրդականին: Բլրի դադաթին կային հնօրյա վանքի, թե բերդի ավերակների մնացորդները: Բլրի շրջակայքից, վար անելիս, մի քանի անգամ հայտնաբերվել էին պղնձե ամաններ, խեցեղեն ամանների բեկորներ, ինչպես նաև ջրի կավի խողովակներ: Սրանք մաքուր կային բնակավայրի ապացույցներ էին: Ահա այս Ա. Արդսի տեղն էլ ավանդաբար համարվում էր Արճակի երբեմնի տեղը: Ս. Արդսիսը սրբացված էր նաև քրդերի կողմից:

Հնարավոր է, որ Արճակի լճի շուրջը հյուսված ավանդությունները լինեն Վահագնի ու Ասաղիկի սյալաւանդների հետ առնչվող արճադանքներ, դուցե ժամանակին նաև մեհյան է եղել լճափին:

Դրա նյութական ապացույցը պե՞տք է համարել այն, որ լճափին շատ մոտիկ մի ըլրակ կար, դադաթին՝ դեռ առ դեռ կանգնեցրած շուրս անտաշ, սև սալաքար: Չորս պատ ներկայացնող հիշյալ քարերին, որպես ծածկ, հովանի էր անում մի այլ սովորական, սև սալաքար: Դա ուխտատեղի էր Անխալ աղ սրբավայրը կոչվում էր Քուլա Մաճուկ:

Համաշխարհային առաջին պաշտոնադրից առաջ Տիբան և Պողոս Կաղիկյան եղբայրները Քուլա Մանուկի մոտ դառնալով իրենց հողամասում


նոր ընկերության հիմնելու ժամանակ, Թուխ Մանուկի քույր ներքեից աղյուսներ պատրաստելու համար հող վերցնելիս, սրբաբան քարերից շարված շինություն մի ամբողջական պատահայտնաբերեցին: Պատի վրա խաչի ոչ մի նշան չերևաց: Հետ դուրսի ծերերի ու նրանց լսած ավանդությունների, Արճակը եղել է Արշակունիների ամառանոց:

Իրականությունն այն էր, որ Արճակը և շրջապատի գյուղերը զուտ հայկական ընկալվածքներ են եղել՝ իրենց ընդարձակ վարելահողերով: 1800-ական թվականներից էր, որ Արճակին պատկանող հողամասերում հիմնվել էին Քրդվան քրդական և Ազկարա չեքոսկան գյուղերը:

Իմ ապրած Արճակը ըստ ամսագրի էր՝ զուտ հայկական, դավաճան կենտրոնն էր և հարուստ ու առաջավոր գյուղի համարվում էր:


Գյուղի սրբեկավորներից սկսվող մի աննշան

ծորակ գյուղը բաժանում էր երկու մասի: Աջակողմյան, ավելի ընդարձակ ու խիստ ընկալված թաղամասը կոչվում էր Փոս Բաղ, իսկ ձախակողմյանը՝ Քյոզաքի Բաղ: Փոս Բաղի կողմի վրա էր ընկնում «Խին խաչեր» կոչված, հայկական անառաշ առաքանաքարերով Արճակի հին գերեզմանատունը և «Վանից (վանքի) տանը պատկանող ջրաղացը: Փոս Բաղի միջով էին անցնում «Խառակոնսա ջաղղա» (խառակոնսի լայնուղի) կոչվող ճանապարհը, որը Խառակոնսի միացնում էր Արճակին, ինչպես և Վան տանող ուղին: Փոս Բաղում էր գտնվում այն աննշան սրբաքանդին, որ, ըստ ավանդության, Նահապետ Քուշակը պատանի հասակում երգելու ներշնչանք էր ստացել: Հիշյալ սրբաքանդին կից «Պաղում խաչեր» կոչված վայրում թաղված էին 1896 թ. հունիսի իննի հայկական ջարդերին Նահատակված արճակցիները:



Արճակ գյուղի հատկագրեր

1. Քաղաքի ճամբար (վան տանող ճանապարհը), 2. Խառակոնսա ջաղղա (լայնուղի), 3. Աջակողմյան ճամբար (Պարսկաստան տանող ճանապարհը), 4. Զուլ կյետ (գետ), 5. Պրդախի կյետ, 6. Հին խաչեր (հին գերեզմանոց), 7. Վանից տուն, 8. Ֆոս-Գյուլի Տեր-Կարապետի կալվե, 9. Պաղում գյուղան, 10. Պաղում խաչեր, 11. Տեր-Կարապետի տուն, 12. Կարմիր տվետրանի մասուն, 13. Ավելի Եղյուի տուն, 14. Զեմոյի ճաղաց, 15. Մուքայելի տուն, 16. Կալտանի, 17. Գյուլ Մուքայելի ճաղացի հետ, 18. Շորեր (աղուտներ), 19. Ախպուր, 20. Ավելոց, 21. Խառն տուն, 22. Մուղուրլուք, 23. Խառնի տուն, 24. Թուխ մասուն, 25. Կալտանի, 26. Թախիսի գյուղան, 27. Սալաղի կալվեն, 28. Պիպի կալվեն, 29. Ոստիկանատուն, 30. Փոս-Կոնաքատուն, 31. Նախրակյնա, 32. Սուրբ Գեորգ եկեղեցի, 33. Վարժատուն, 34. Պաղում խաչեր, 35. Մուղի հին տուն, 36. Կերեզմանոց (Նոր):



Մոլոյի հին տան հատակագիծը

1. Սրահ, 2. Տան սրահ, 3. Բոնրառուն՝ քառապլուս, մեջտեղում թոնիրը, 4. Պիտոյի մասան, 5. Կլորուկրու մասան (անվանակիր մասան՝ ամուսնացած երիտասարդի նշանակակ), 6. Հացի մասան, 7. Փայտի սրահ, 8. Գլուս (քարի փորվածք, ուր լցվում էր ջրհորից քաշած ջուրը՝ անասուններին ջրելու համար), 9. Զրիսոր, 10. Զուլ (փայտի սրահի լարձ-րադիր սալարկված հատված, ուր լողացնում էին անասուններին. այսպեղից ջուրը դուրս էր հոսում ծոծակով), 11. Կլոմչներաց լար, 12. Էջերաց (զոմչակովերի) լար, 13. Կովերաց լար, 14. Միերաց լար, 15. Եղներաց լար, 16. Դանա-դուրներաց (մինչև երեք տարեկան խոշոր եղջերավոր անասունների) լար, 17. Փայտի հողա (գիվանխանա), 18. Բուխարիկ (րուխարի), 19. Զրիսոր, 20. Գոմ, 21. Հողա, 22. Ամրոցներ, 23. Բախշա, 24. Քարե պատ, 25. Մոծակ:

Երկու թաղերի կենտրոնումն էր եկեղեցին ու նրա գիմնադր լայնաաբաժ ճեպարակներն, ուր անհիշելի ժամանակներից հավաքվում էր Արճակի նախիրը: Այդանդ էին իրենց շնորհքը ցուցաբերում Սըվի Կառապետ (սուրբ Կարապետի) լարախաղացները: Այգտեղ էին իշնում Գյավառ քրդական գյուղի քրդերը, որոնք մի ամսով Արճակ էին գալիս հունձ անելու:

Քյողարի թաղը փոքր էր, ընակչությունը՝ նոսր, սակայն այդտեղ եռուղեք շատ էր: Քյոզարի թաղումն էին գտնվում դավառապետարանը, ոստիկանատունը, հեռագրատունը, թեյարանը ու այլևայլ հիմնարկներ: Նահանգի կենտրոն Վան քաղաքը և Պարսկաստանի սահմանագլխին եղած Սարա կայսերականիսա փոքրիկ քաղաքն իրար միացնող ընդհանուր ճանապարհով երթեկող ամեն տեսակի ուղեորներ, որոնք գիշերելու էին Արճակում, պերադասում էին լինել Քյողարի թաղում: Իսկ այդ ուղեորները ընդամենով էին ու ընդամենով փոխադրվող ղորամասեր, դեսպանությունների հետ առնչվող ժառանգիրացիներ, պարսկական առեւտրական քարավաններ՝ ուղեորի շարաններով, քուրդ համիդիի ասկյարներ, ինչպես նաև առեւտրականներ ու արհեստավորներ:

Ամենօրյա այս շփումները Քյողարի թաղեցոց մեջ դարձացրել էին նորի ընկալման, քաղաքավարի նիստուկացի, կիրթ վարմունքի ու ինքնազնահաւան ղգացողություն և վայելուչ արաաքին պահպանելու ձգտում:

Քյողարի թաղեցոց նմանօրինակ «քաղքցութեն» ահաճություն էր պատճառում փոսթաղեցոց, որոնք իրենց նիստուկացում պահպանում էին նահապետական պարզություն:

Դպրոցը գտնվում էր գյուղից դուրս և ոչ մի թափ կողմի վրա չէր ընկնում, այնուամենայնիվ,

դպրոցում պաշտոնավարող ուսուցիչները ես նախընտրում էին ապրել Քյողարի թաղում:

Ինչքան էլ արճակցոց մեջ գայություն ունենար թաղային տարրություն, միեւնույն էր, արյունակցական, խնամիական, հարեանական, աշխատանքային հաղար ու մի թելերով նրանք հյուսված էին միմյանց, Որքան էլ փոսթաղեցինք քյողարի-թաղեցոց համարին «պոչով-պոչով», իսկ քյողարի-թաղեցիք նրանց անվանեին «վայրենի», ընդհանուր առմամբ միեւնույն հատկանիշների տեր մարդիկ էին՝ թե՛ պատվախնդությամբ, թե՛ աղպսիրությամբ, թե՛ հյուրընկալությամբ և թե՛ անխաղախությամբ: Տարրերությունն այն էր, որ փոսթաղեցիք միմյանց հանդեպ ցուցաբերելով սեր և մանրություն, կիրթ չէին, կառակների մեջ նույնիսկ հայհոյանքներ էին գործածում, մի րան, որ քյողարի-թաղեցոց մեջ ընդունված չէր: Նրանց հայրաները, թեկուզ և լինեին քաղաքից ընդմիջ, աղքիկներ, շատ շուտ աղատ ել ու մուտ էին անում հարեանների անները: Կանայք և աղքիկները ավելի շատ էին մասնակցում դաշտային աշխատանքներին:

Այս ամենը նկատելի էր Արճակի ներսում, իսկ դրսում, ուրիշ գավառների ընակիչները աչքում Արճակը Արճակ էր, արճակցին՝ արճակցի՝ քաղքցուն ընդմիջ, ղանգի (հարուստ), քիրար (հպարտ): Դրանք, այդ ուրիշները, արճակցոց նման որակում էին ապրիս. «Դոր էլ էրթաս, խացդ ի խերիք, Առճակն էրթաս» կալին շիրիկ» (Ուր էլ դնաս, հացդ ընկալար է, Արճակ դնաս, նրա կալի հասույթին իրավահավասար ես):

Արճակ գյուղը ընդկացած էր 160 անից, բոլորը հայեր, ընցառյալ վանեցի մի թուրք ծերուկից և իր կնոջից:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ա Ն Ց Ք Ե Ր

Արճակ գյուղը, որ անցյալ դարավերջին ապավին կոչվում էր շեն Արճակ, յուրովի է մասնակցել 1890-ական թվականների սկզբների աղպային-աղաաադական շարժումներին: Այդ շարժումների կազմակերպիչներն ու դադափարախոսները մեծ մասամբ կովկասահայեր էին, որոնք Վան հասնելու և այնտեղից իրենց դործունեությունը ծավալելու համար, ընցի Թավրիզ-Բաշկալա ուղուց, ունեին ես երկու ճանապարհ: Մեկն անցնում էր ոռա-թուրքական սահմանագլխային Օրգով պահակակետով, Բայազետի դավա-վառի մի շարք ավարառու քրդական գյուղերով,

ապա՝ Վանի նահանգի քրդաշատ ընակավայրեր ունեցող Արաղայի դաշտով, Բերկրի մուլպուրանիսա ավանով, այնուհետև Թիմարի գավառով ու նոր միայն Վան հասնում: Այս ուղին խիստ վաճառ-վոր էր:

Վան աանող երկրորդ ուղին սկսվում էր Սալմասաից. պարսկա-թուրքական սահմանադիսային կայսերականիսա Սարա փոքրիկ քաղաքից հետո, անցնում մի շարք քրդական գյուղերով, ապա Արճակով և դավառի հարավի հայաշատ գյուղերով մասնում Վան: Վերջինս ավելի անվրաանդ էր, քանի որ հիշյալ ճանապարհով էին